

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/7

9 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Կարեն Սեդրակյանի 08.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.12.2015 թ-ի թիվ 307635/08 որոշման դեմ:

Քաղաքացի Կարեն Սեդրակյանի գանգատում բերված փաստարկները.

Կարեն Սեդրակյանը հայտնում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանդիսանում է Մասիս քաղաքի բնակիչ, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.12.2015 թ-ի թիվ 307635/08 որոշման մեջ նշված հայտարարագիրը ներկայացրել է Արտաշատի ՏՀՏ:

Ելնելով վերոգրյալից՝ Կարեն Սեդրակյանը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.12.2015 թ-ի թիվ 307635/08 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 02.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1317 արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Կարեն Սեդրակյանը օրենքով սահմանված ժամկետում Հրազդանի ՏՀՏ չի ներկայացրել 2015 թ-ի սեպտեմբեր ամսվա ԵՏՄ-ից ներմուծված ապրանքների վերաբերյալ հայտարարագիրը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 15.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 307635/08 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Կարեն Սեդրակյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Կարեն Սեդրակյանը հաշվառված է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ-ում որպես անհատ ձեռնարկատեր՝ ՀՎՀՀ 47792949: Պարզվեց նաև, որ Կարեն Սեդրակյանի կողմից 09.09.2015 թ-ին ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ տարածք է ներմուծվել 1.845.090 դրամի ապրանքներ: Ընդ որում հարկ է նշել, որ վերոգրյալ ներմուծման մասով Կարեն Սեդրակյանի կողմից օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ 19.10.2015 թ-ին, ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ է ներկայացվել ԵՏՄ անդամ երկրներից ներմուծված ապրանքների վերաբերյալ հայտարարագիր: Սակայն անհասկանալի պատճառներով Կարեն Սեդրակյանի՝ որպես ԵՏՄ անդամ երկրներից ներմուծված ապրանքների վերաբերյալ սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացնողի, վերաբերյալ տվյալները հայտնվել են Հրազդանի

ՏՀՏ համապատասխան ցանկում, որոնք 10.11.2015 թ-ի թիվ 56-5/971141/-15 գրությամբ տրամադրվել են ՀՀ ՖՆ իրավաբանական վարչություն՝ հետագա ընթացքն ապահովելու համար:

Տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Կարեն Սեդրակյանը ԵՏՄ անդամ երկրներից ներմուծված ապրանքների վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագիր չներկայացնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության, այն դեպքում, երբ համապատասխան հայտարարագիրը նրա կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի և 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ զանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 15.12.2015 թ-ի թիվ 307635/08 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

